ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2017-2019թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)









2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3,373.06 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.72%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 2.02%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 16.23%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,108.11 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.82%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 3.16%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 17.22%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ արտաքին պարտքը կազմել է 264.95 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.42%-ով, իսկ 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 9.65%-ով, աճելով 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.73%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,934.18 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.16%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 0.68%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 15.62%-ով: 2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,389.50 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.26%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 1.8%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 16.61%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 544.68 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.98%-ով, իսկ 2018 թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 10.84%-ով, աճելով 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.17%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,404.75 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.24%-ով, աճելով 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 0.92%-ով, իսկ 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 15.28%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 703.36 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.6%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 11.64%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 24.38%-ով: 2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 264.95 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.42%-ով, իսկ 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 9.65%-ով, աճելով 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.73%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4,943.57 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.79%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 0.41%-ով, աճելով 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 14.68%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,445.93 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.02%-ով, 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 10.17%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 23.73%-ով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2017-2019թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)









2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 544.68 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.98%-ով, իսկ 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 10.84%-ով, աճելով 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 5.17%-ով:

ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 4,106.38 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.82%-ով, աճելով 2018թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 0.39%-ով, 2017թ. մարտի 31-ի նկատմամբ՝ 20.25%-ով:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.12%, ինչը 0.17 տոկոսային կետով մեծ է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 1.29 տոկոսային կետով փոքր է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ, 6.18 տոկոսային կետով փոքր է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.35%, ինչը 0.15 տոկոսային կետով փոքր է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 1.38 տոկոսային կետով մեծ է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ, 6.31 տոկոսային կետով մեծ է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

2019թ. մարտի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.53%, ինչը 0.02 տոկոսային կետով փոքր է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 0.09 տոկոսային կետով փոքր է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ, 0.14 տոկոսային կետով փոքր է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարները 2019թ. հունվար-մարտին կազմել են 35.21 մլրդ. դրամ, ինչը 1.14 մլրդ. դրամով ավել է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 6.02 մլրդ. դրամով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված ներքին տոկոսավճարները 2019թ. հունվար-մարտին կազմել են 10.31 մլրդ. դրամ, ինչը 0.02 մլրդ. դրամով պակաս է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 1.68 մլրդ. դրամով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված արտաքին տոկոսավճարները 2019թ. հունվար-մարտին կազմել են 24.9 մլրդ. դրամ, ինչը 1.16 մլրդ. դրամով ավել է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 4.34 մլրդ. դրամով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2017-2019թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին 2019թ. հունվար-մարտին կազմել է 19.93 մլրդ. դրամ, ինչը 3.14 մլրդ. դրամով ավել է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 14.31 մլրդ. դրամով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին փոխառու միջոցների հաշվին 2019թ. հունվար-մարտին կազմել է 28.92 մլրդ. դրամ, ինչը 14.66 մլրդ. դրամով ավել է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 24.37 մլրդ. դրամով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը արտաքին փոխառու միջոցների հաշվին 2019թ. հունվար-մարտին կազմել է -9.0 մլրդ. դրամ, ինչը 11.51 մլրդ. դրամով պակաս է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 10.06 մլրդ. դրամով պակաս է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

2019թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 18.29 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 12.41%-ով ավել է 2018 թ. հունվար-մարտի համեմատությամբ և 76.37%-ով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

2019թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 39.25 մլրդ. դրամի մայր գումար, ինչը 4.93%-ով ավել է 2018 թ. հունվար-մարտի համեմատությամբ և 78.35%-ով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

2019թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության կողմից ստացվել են 20.78 մլրդ. դրամի վարկային միջոցներ, ինչը 106.15%-ով պակաս է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 14.72%-ով պակաս է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

2019թ. հունվար-մարտին ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 57.54 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 7.2%-ով ավել է 2018թ. հունվար-մարտի համեմատությամբ և 77.72%-ով ավել է 2017թ. հունվար-մարտի համեմատությամբ:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2017-2019թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (մարտ ամսվա վերջի դրությամբ)

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման



Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 615.93 մլրդ., ինչը 27.82 մլրդ. դրամով ավել է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ., 55.19 մլրդ. դրամով ավել է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ և 104.85 մլրդ. դրամով ավել է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 3177 օր, ինչը 131 օրով պակաս է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 87 օրով ավել է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ և 737 օրով ավել է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 5.05%, ինչը 0.08 տոկոսային կետով մեծ է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 0.18 տոկոսային կետով մեծ է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ և չի փոխվել 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) կարճաժամկետ պարտքի բաժինը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 0.87%, ինչը 0.09 տոկոսային կետով փոքր է 2018 թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 0.1 տոկոսային կետով մեծ է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ և 0.84 տոկոսային կետով փոքր է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) միջնաժամկետ պարտքի բաժինը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 8.11%, ինչը 0.48 տոկոսային կետով մեծ է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 0.44 տոկոսային կետով փոքր է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ և 0.49 տոկոսային կետով փոքր է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) երկարաժամկետ պարտքի բաժինը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 91.02%, ինչը 0.39 տոկոսային կետով փոքր է 2018թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ, 0.34 տոկոսային կետով մեծ է 2018թ. մարտի 31-ի համեմատությամբ և 1.33 տոկոսային կետով մեծ է 2017թ. մարտի 31-ի համեմատությամբ:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2019 -2021ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (մարտ ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2019-2021թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 8.48 տարի: Այս ցուցանիշը 2018թ. մարտի 31-ի և 2017թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից նվազ է համապատասխանաբար՝ 0.53 և 0.76 տարով:

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2019թ. մարտի 31-ի դրությամբ կազմել է 12.01%, որը 2018թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից ավել է 0.27 տոկոսային կետով, իսկ 2017թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից պակաս է 8.91 տոկոսային կետով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2019թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.91%, լողացող տոկոսադրույքով՝ 15.09%: Ընդ որում, 2019թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2018 թվականի և 2017 թվականի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 1.58 և 2.59 տոկոսային կետերով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 20%:

ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2019թ. մարտի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 77.37%, ներքին պարտք՝ 22.63%: Ընդ որում, 2019թ. մարտի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2018 թվականի և 2017 թվականի համապատասխան ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 1.72 և 1.3 տոկոսային կետերով: